Ներկայացվում է յուրաքանչյուր ամիս մինչև հաջորդող ամսվա 5-ը

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և մարմնի ղեկավարի կողմից կատարած քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2018 թվականի փետրվար ամսվա ընթացքում քաղաքացիներից ստացվել է թվով 26 առաջարկություն, դիմում և բողոք, որից 6- ը վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից.

Դիմումներն ըստ բնույթի	Ընդամենը	Պատաս-խանվել է	որից			Ծանոթություն
			Տրվել է դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	
Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմաների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում /այդ թվում պտղատու այգիների համար/ գործում են «Գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմաներն ու ռեժիմները Հայաստանի Հանրապետության ոռոգելի հողատարածքների համար» ձեռնարկով սահմանված նորմաները, որոնք պաշտոնական են և հաստատված են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 02.-04.2007 թվականի N 18-Ա և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 02.04.2007թվականի N 77-Ա համատեղ հրամանով: Վերջինս

						տրամադրվել է հանրապետության բոլոր համայնքներին և ջրօգտագործողների ընկերություններին: Ձեռնարկում զետեղված են հանրապետությունում գործող թվով 70 ոռոգման ռեժիմներ կախված հողերի տեղադիրքից , տեսակից, հզորությունից, մեխանիկական կազմից և այլն: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն պատրաստակամ է տրամադել տեղեկատվություն դիմումատուի կողմից հստակ տվյալներ ներկայացնելու դեպքում:
Մեղրի իրացման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	1	1	1			
Պտղատու ծառերի տնկիներ հատկացնելու մասին	2	1			1	1 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2018 թվականից իրականացվում է «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» պիլոտային ծրագիրը, որին նա կարող է ծանոթանալ www.minagro.am կայքի «ծրագրեր, գերակա խնդիրներ»

						բաժնի «պետական օժանդակության ծրագրեր» ենթաբաժնում: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ հանրապետությունում տնկանյութի արտադրությունն ու իրացումն իրականացվում է մասնավոր տնտեսավարողների կողմից և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տնկանյութի պաշարների չի տնօրինում:
Սանիտարահիգիենիկ նորմերի խախտմամբ իրականացվող հացի արտադրությունն արգելելու վերաբերյալ	1	1	1			
«Արենի» գինու փառատոնի շրջանակներում անցկացված մրցույթի հաղթողի վկայականը ստանալու հարցում օժանդակություն ցուցաբերելու մսաին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ «Արենի» գինու փառատոնի շրջանակներում անցկացված գինիների մրցույթի հաղթողների վկայականների տրամադրման իրավասությունը պատկանում է «Արենի փառատոն» հիմնադրամին: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամը կապ է հաստատել «Արենի փառատոն» հիմնադրամի հետ և պարզել, որ մրցույթի հաղթող գինեգործների վկայականները կհանձնվեն առաջիկայում:

Աշխատանքից ազատելու վերաբերյալ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի ծանուցումը չեղյալ ճանաչելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Անասնաշուկայից գնված խոշոր եղջերավոր անասունների անկման պատճառով կրած վնասի և գայլերի կողմից հոշոտված ոչխարների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	2	1			1	1 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումատուի տեղեկացվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից յուրաքանչյուր տարի «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում իրականացվող կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումների ցանկում ֆասցելիոզ և թեյլերիոզ հիվանդությունները ներառված չեն: Համաձայն «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ և 10-րդ կետերի՝ կենդանիների և թռչունների բուծմամբ, անասնապահությամբ զբաղվողների պարտականությունների մեջ մտնում են կենդանիների պաշտպանության և բարօրության, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների խնամքին և պահմանը ներկայացվող զոոհիգիենիկ պահանջների բավարարումը: Բացի այդ, ՀՀ կառավարության

						2008 թվականի հունվարի 31-ի «Անասնահամաճարակների հետևանքով գյուղատնտեսական կենդանիների անկումների և հարկադիր սպանդի դեպքում սեփականատիրոջը ցուցաբերվող օժանդակության կարգը հաստատելու մասին» N 82-Ն որոշման N 2 հավելվածով հաստատված կենդանիների հիվանդությունների ցանկում ֆասցելիոզ և թեյլերիոզ հիվանդությունները ներառված չեն: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում է նպատակային ծրագրեր իրականացնելու համար, ուստի ֆինանսական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ նրա խնդրանքը հնարավոր չէ բավարարել:
Համայնքի ղեկավարի ընտրության կարգը փոխելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ համայնքի ղեկավարի թեկնածուների համար գյուղատնտեսի մասնագիտական կրթության պահանջ սահմանելու և նրանց ընտրության գործընթացը կանոնակարգելու վերաբերյալ դիմումատուի կողմից բարձրացված հարցը դուրս է ՀՀ գյուղատնտեսության նախարարության իրավասությունների շրջանակից:

						Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացման գործընթացը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ ընտրական օրենսգրքով:
Ձեռք բերված երինջների դիմաց վճարման նոր ժամանակացույց կազմելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով խորքային հորի հորատման թույլտվություն ստանալու գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Հողատարածք վարձակալության հանձնելու մասին	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի «Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին» N 806-Ն որոշման 25-րդ կետի համաձայն անտառների և անտառային հողերի վարձակալության իրավունքը տրամադրվում է մրցույթի միջոցով, որի մասին ծանուցվում է

						www.azdarar.am և լիազորված մարմնի www.min-agro.am պաշտոնական ինտերնետային կայքերում: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից սահմանված կարգի համաձայն՝ մրցույթ անցկացնելու համար անհրաժեշտ է, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ը նախարարություն ներկայացնի մրցույթ հրապարակելու վերաբերյալ առաջարկություն՝ կցելով վարձակալությամբ տրամադրվող տարածքի հատակագծի և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի պատճենները:
Պարարտանյութ հատկացնելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ 2018 թվականին նախատեսվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացնել «Պետական աջակցություն հողօգտագործողներին մատչելի գներով պարարտանյութերի ձեռքբերման» ծրագիրը, որի շրջանակներում ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերը հատկացվում են ՀՀ մարզպետարանների կողմից հաստատված և ներկայացված փաստացի վճարունակ պահանջարկի հիման վրա: Վերջինս կազմվում է հա-

						մայնքների ղեկավարներից ստացված պահանջարկի հենքի վրա: Առաջարկվել է դիմումատուին պարարտանյութեր ձեռք բերելու համար դիմել համայնքի ղեկավարին: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն անհատույց տրամադրվող պարարտանյութերի պաշարների չի տնօրինում:
«Արենի Վայն» ՍՊԸ-ի կողմից մթերված խաղողի դիմաց գումար վճարելու գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ շուկայական տնտեսության պայմաններում գյուղատնտեսական հումքի, այդ թվում ՝ խաղողի մթերման գները ձևավորվում են առաջարկի և պահանջարկի հիման վրա, իսկ մթերման փոխհամաձայնեցված գինը և վճարման պայմաններն ամրագրվում են արտադրող և մթերող մասնավոր տնտեսավարողների միջև կնքված բերքի գնման պայմանագրերում: ՀՀ կառավարությունն այդ հարաբերություններին միջամտելու և ներազդելու իրավասություններ և լծակներ չունի: ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն ուղղված դիմումատուի նույնաբովանդակ դիմումներում բարձրացված՝ 2015 թվականին «Արենի վայն» ՍՊԸ-ին հանձնված խա-

						ղողի արժեքի վճարմանն օժանդակելու վերաբերյալ խնդրին ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջամտությունն արդյունք չի տվել: Ելնելով վերոգրյալից առաջարկվել է դիմումատուին խնդիրը լուծել «Արենի վայն» ՍՊԸ-ի տնօրենի հետ բանակցությունների միջոցով կամ դատական կարգով:
Կարտոֆիլահավաք գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին	1	1	1			
Վարկ տրամադրելու մասին	2	1			1	1 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր ծրագիրը: Նշված ծրագրով վարկերը տրամադրվում են 3-10 մլն դրամ գումարի սահմաններում մինչև 5 տարի մարման ժամկետով, ելնելով գործունեության կոնկրետ ծրագրով նախատեսված ներդրումների բնույթից: Վարկերը

						տնտեսավարողներին տրամադրվում են 5% տոկոսադրույքով, իսկ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերին և գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 3% տոկոսադրույքով: Տոկոսադրույքի և մայր գումարի մարման համար ֆինանսական կառույցի կողմից կարող է սահմանվել արտոնյալ ժամկետ՝ առավելագույնը 12 ամիս: Ֆինանսական կառույցի համար սուբսիդավորվող վարկերի տրամադրման նախապայման է սահմանված Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից ուսուցման արդյունքում տնտեսավարողներին տրամադրված հավաստագիրը: Ուսուցման և հավաստագիր ստանալու համար առաջարկվել է դիմումատուին դիմել Հիմնադրամի Արմավիրի մարզային կառույցին:
Վառելանյութ մատակարարելու գործում համագործակցելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից նախատեսվում է 2018 թվականին իրականացնել պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման ծրագիրը, որի շրջանակներում հայտարարվել է դի-

						զելային վառելիքի ձեռքբերման մրցույթ: Վերջինիս մասնակցելու համար վերջնաժամկետ է սահմանվել 2018 թվականի փետրվարի 26-ը: Միաժամանակ պարզաբանվել է դիմումատուին, որ մանրամասն տեղեկատվություն կարող է ստանալ https:// armeps.-am կայքի հայտեր բաժնից:
Հայաստանի Հանրապետությունում այգեգործության զարգացման ուղղությամբ առաջարկվող քայլերի մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Ընդամենը	26	15	3		12	10 դիմում ընթացքի մեջ է:
Որից՝ ՀՀ կառավարության աշխատակազմից վերահասցեագրված						
Գյուղացիական տնտեսությունների միավորման միջոցով տավարաբուծությունը զարգացնելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն ողջունում է դիմումատուի կողմից ներկայացված ծրագրային առաջարկը: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կայացած քննարկման ընթացքում տեղեկացվել է դիմումատուին, որ 2015 թվականին ընդունվել է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 16-ի N 11 արձանագրային որոշմամբ հավանության է արժա-

						նացել «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիրը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը, որով նախատեսվում է 2017 թվականի երրորդ եռամսյակից սկսած գյուղատնտեսական վարկերի տրամադրում: Վերջինս շարունակվելու է նաև հետագա տարիներին: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ սուբսիդավորվող վարկերի տրամադրման հայտի ընդունման, քննարկման և վարկի տրամադրման նախապայման է հանդիսանում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից ուսուցման արդյունքում տնտեսավարողներին տրամադրված հավաստագիրը:
Անասնաբուժության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ միջոցներ ձեռ-	1					1 դիմում ընթացքի մեջ է:

նարկելու մասին						
«Էկոգլոբ» ընկերության կողմից գյուղատնտեսական արտադրանքի հավաստագրման գործում առկա առանձին խնդիրների մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է;
Վարկ տրամադրելու գործում օժանդակելու մասին	2	1			1	1 դիմում ընթացքի մեջ է: 1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը: Որոշումը տեղադրված է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կայքի պետական օժանդակության ծրագրերի բաժնում: Ծրագիրն իրականացվում է 2017 թվականի չորրորդ եռամսյակից: Նշված ծրագրով վարկերը տրամադրվում են 3-10 մլն դրամ գումարի սահմաններում մինչև 5 տարի մարման ժամկետով, ելնելով գործունեության կոնկրետ ծրագրով նախատեսված ներդրումների բնույթից: Վարկերը տրամադրվում են 5% տոկոսադրույքով, իսկ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ

						բնակավայրերին և գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 3% տոկոսադրույքով: Վերջինիս և մայր գումարի մարման համար ֆինանսական կառույցի կողմից կարող է սահմանվել արտոնյալ ժամկետ՝ առավելագույնը 12 ամիս: Ֆինանսական կառույցի համար սուբսիդավորվող վարկերի տրամադրման հայտի ընդունման, քննարկման և վարկի տրամադրման նախապայման է սահմանված Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից ուսուցման արդյունքում տնտեսավարողներին տրամադրված հավաստագիրը: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ ջերմոցային կոնստրուկցիաների ներմուծումն ազատված է ավելացված արժեքի վճարումից:
Գյուղատնտեսության ոլորտում առկա հիմնախնդիրների մասին	1					Դիմումը ընդունվել է ի տնօրինություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումում պատասխան ակնկալող հարց բարձրացված չէ:
Ընդամենը	6	2			2	3 դիմում ընթացքի մեջ է, 1 դիմում ընդունվել է՝ ի տնօրինություն:

2018 թվականի փետրվար ամսվա ընթացքում կատարվել է քաղաքացիների 13 ընդունելություն, այդ թվում 3 -ը մարմնի ղեկավարի կողմից

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Տրվել է Դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	Ծանոթություն
Գյուղատնտեսական մթերքների իրացման հարցում օժանդակություն ցուցաբերելու մասին	1	1			
Սոյայի արտադրություն կազմակերպելու մասին	1			1	Քաղաքացուն առաջարկվել է ներկայացնել անհրաժեշտ ծախսերի հիմնավորված հաշվարկների հիման վրա կազմված ծրագիր:
Սերմացու հատկացնելու մասին	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից նախատեսվում է իրականացնել՝ Հայաստանի Հանրապետությունում 2018 թվականին գարնանացան ցորենի, ոլոռի, սիսեռի, գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագիրը, որի շրջանակներում սերմացուները հատկացվում են ՀՀ մարզպետարանների կողմից հաստատված և ներկայացված փաստացի վճարունակ պահանջարկի հիման վրա և առաջարկվել է դիմումատուին սերմացու ձեռք բերելու համար դիմել համայնքի ղեկավարին:
Ցածր տոկոսադրույքով վարկ	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է ՀՀ կառավարության 2017 թվականի սեպ-

տրամադրելու մասին					տեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նոր ծրագիրը, ինչպես նաև դրանից օգտվելու համար սահմանված պահանջները:
Խաղողի օրգանական մաքուր կերերի արտադրության ծրագրի իրականացման գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	1	1			
Արևային տեխնոլոգիաների օգտագործմամբ մթերքների արտադրություն և վերամշակում կազմակերպելու մասին	1			1	Քաղաքացուն առաջարկվել է ներկայացնել գյուղատնտեսական մթերքների արտադրության և վերամշակման անհրաժեշտ ծախսերի հիմնավորված հաշվարկների հիման վրա կազմված ծրագիր:
Գարնանացան գարի հատկացնելու մասին	1	1			
Աշխատանքի ընդունելու մասին	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը, ըստ որի թափուր պաշտոններում նշանակվում են մրցութային կարգով և առաջարկվել է դիմումատուին հետևել «Հանրային ծառայություն» շաբաթաթերթին կամ քաղաքացիական ծառայության խորհրդի ինտերնետային կայքին, որտեղ տպագրվում են հանրապետությունում առկա քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար

					մրցույթներ անցկացնելու վերաբերյալ հայտարարությունները:
Սպանդանոց կառուցելու համար տարածք հատկացնելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ տարածք հատկացնելու հարցը դուրս է ՀՀ գյուղատնտեսության նախարարության իրավասությունների շրջանակներից:
Ջերմոցաշինության ծրագրի հիմնական դրույթները պարզաբանելու մասին	1	1			
Ընդամենը	13	4		9	
այդ թվում անձամբ մարմնի ղեկավարի կողմից կատարած ընդունելության արդյունքները					
Գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն առաջարկվել է տարեկան 5% տոկոսադրույքով վարկ ստանալու համար օգտվել «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից, ինչպես նաև պարզաբանվել է ծրագրից օգտվելու պայմանները և ընթացակարգը:
Տոհմային երինջներ ձեռք բերելու գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում տավարաբուծության զարգացման ծրագիրն ավարտվել է, իսկ առաջին վերարտադրության տոհմային երինջներ կարող է ձեռք բերել ֆերմաներից: Միաժամանակ տեղեկացվել է քաղաքացուն, որ նրա դիմում-հայտը սահմանված կարգով հաշվառվել է և նոր ծրագրի հաստատման դեպքում դրան սահմանված կարգով ընթացք կտրվի:

Առաջնային և երկրորդային հումքով ջերմոցային կոմպլեկտների, նոր տիպի պոլիէթիլենային թաղանթների արտադրության ծրագրի ֆինանսավորման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ ծրագիրը քննարկելու համար անհրաժեշտ է ներկայացնել ծրագրի արդյունավետությունը հիմնավորող փաստաթղթեր, որի մասին նրան տեղեկացվել է նաև ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշ.Հարությունյանի 2018 թվականի հունվարի 31-ի գրությամբ՝ ի պատասխան քաղաքացու կողմից ՀՀ վարչապետին ուղղված 2017 թվականի դեկտեմբերի 15-ի դիմումի:
Ընդամենը	3			3	